

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՍ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի

4.11.2019թ. թիվ 1110 Ն/Կ հրամանի

Կ Ա Ր Գ

ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ԵՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ

Ընդունված է Համալսարանի գիտական խորհրդի կողմից
Արձանագրություն թիվ 10 31.10.2019թ.

Վանաձոր

2019թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» (այսուհետ՝ Համալսարան) հիմնադրամի (բացառությամբ ՎՊՀ հենակետային վարժարանի և քոլեջի) աշխատակիցներին և ուսանողներին համալսարանի կողմից դրամական օգնության և աջակցության հատկացման կարգը և չափերը, աղբյուրները:
2. Սույն կարգի իմաստով Համալսարանի աշխատողներ են համարվում դրամական օգնության և աջակցության հատկացման անհրաժեշտության առաջացման պահին գործատուի հետ աշխատանքային հարաբերության մեջ գտնվող անձինք:
3. Սույն կարգի իմաստով ուսանողներ են համարվում դրամական օգնության և աջակցության հատկացման անհրաժեշտության առաջացման պահին Համալսարանում ուսումնառող անձինք:
4. Սույն կարգով սահմանված դրամական օգնությունն ու աջակցությունը Համալսարանի աշխատողներին և ուսանողներին տրամադրվում է միանվագ:
5. Դրամական օգնության և աջակցության հատկացման աղբյուրներ են ՎՊՀ պահուստային ֆոնդից:

II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

6. Դրամական օգնություն ստանալու իրավունքը Համալսարանի աշխատակիցների համար ծագում է՝
 - 6.1 աշխատակցի մահվան դեպքում - 100 (մեկ հարյուր) հազար ՀՀ դրամ՝ աշխատակցի ժառանգին:
 - 6.2 աշխատակցի ընտանիքի անդամի մահվան դեպքում – 50 (հիսուն) հազար ՀՀ դրամ աշխատակցին,
 - 6.3 աշխատակցի հետ տեղի ունեցած դժբախտ պատահարի կամ այնպիսի հիվանդության դեպքում, որոնց հետևանքով անհրաժեշտ է երկարատև բուժում կամ թանկարժեք դեղորայք - 30 (երեսուն) հազար ՀՀ դրամ:
7. 6.3 կետում նշված դեպքերում հիվանդանոցային և արտահիվանդանոցային բուժման, հետազոտության ենթակա հիվանդությունների կամ դեպքերի ցանկը շարադրված է կարգի Հավելված 1-ում:

8. Դրամական օգնություն ստանալու նպատակով Համալսարանի աշխատող(ներ)ը կամ նրանց ժառանգները Համալսարանի ընդհանուր բաժին են ներկայացնում Հավելված 2-ում նշված փաստաթղթերը:
9. Դրամական աջակցություն ստանալու իրավունքը Համալսարանի աշխատակիցների համար ծագում է`
 - 9.1 մինչև 12 տարեկան երեխաներ ունեցող աշխատակցի համար` երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ յուրաքանչյուր տարվա հունիսի 01-ին` - յուրաքանչյուր երեխայի համար 5 (հինգ) հազար ՀՀ դրամ:
 - 9.2 առաջին անգամ ամուսնացող աշխատակցի համար – 50 (հիսուն) հազար ՀՀ դրամ
 - 9.3 Համալսարանի աշխատակիցների միջև ամուսնության դեպքում յուրաքանչյուրին – 40 (քառասուն) հազար ՀՀ դրամ:
 - 9.4 երեխա ունենալու դեպքում, անկախ այն հանգամանքից` երեխա ունեցող ծնողներից մեկը, թե երկուսն են Համալսարանի աշխատակից – 50 (հիսուն) հազար ՀՀ դրամ:
10. Առողջության վերականգնման նպատակով Համալսարանը որոշ դեպքերում կարող է իր աշխատակիցներին տրամադրել առողջարանային ուղեգիր:
11. Համալսարանի աշխատակիցներին դրամական օգնություն և աջակցություն տրամադրվում է պահուստային ֆոնդից:

III. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՅՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

12. Դրամական օգնություն ստանալու իրավունքը Համալսարանի ուսանողների համար ծագում է`
 - 12.1 ուսանողի հետ տեղի ունեցած դժբախտ պատահարի կամ այնպիսի հիվանդության դեպքում, որոնց հետևանքով անհրաժեշտ է երկարատև բուժում կամ թանկարժեք դեղորայք - 30 (երեսուն) հազար ՀՀ դրամ` համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում:
13. Դրամական աջակցություն տանալու իրավունքը Համալսարանի ուսանողների համար ծագում է`
 - 13.1 առաջին անգամ ամուսնացող և Համալսարանում սովորող ուսանող զույգի համար – 50 (հիսուն) հազար ՀՀ դրամ:
 - 13.2 ուսանողի կողմից երեխա ունենալու դեպքում, եթե երեխա ունեցող ծնողները Համալսարանում սովորող ուսանողներ են – 50 (հիսուն) հազար ՀՀ դրամ:
14. Համալսարանի ուսանողներին դրամական օգնություն և աջակցություն տրամադրվում է պահուստային ֆոնդից:

IV. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ ԵՎ ԽՐԱԽՈՒՍՈՒՄԸ

15. Համալսարանի ուսանողներին դրամական պարգևատրում տրվում է՝

14.1 գիտության կամ սպորտի բնագավառում հանրապետական և միջազգային առարկայական օլիմպիադաներում կամ մրցույթներում մրցանակային տեղ շահելու դեպքում– յուրաքանչյուր դեպքում 30 (երեսուն) հազար ՀՀ դրամ:

15. Համալսարանի ուսանողներին դրամական խրախուսում տրվում է՝

15.1 համալսարանական ուսանողական և այլ միջոցառումներին ակտիվորեն մասնակցած, իր գործունեությամբ ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու ռազմահայրենասիրական դաստիարակությանը նպաստած յուրաքանչյուր ուսանողին 10 (տասը) հազար ՀՀ դրամ:

15.2 հանրապետական և միջազգային գիտաժողովներին մասնակցած և հոդված տպագրած ուսանողին – 20 (քսան) հազար ՀՀ դրամ:

16. Համալսարանի ուսանողներին դրամական պարգևատրում և խրախուսում տրամադրվում է պահուստային ֆոնդից:

V. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ, ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ

ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՈՒ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂՆԵՐԸ

17. Սույն կարգի 6.1 կետով նախատեսված դրամական օգնության հատկացման համար ռեկտորին զեկուցագիր է ներկայացնում մահացած աշխատակցի անմիջական ղեկավարը կամ մարդկային ռեսուրսների և հատուկ բաժնի պետը, կարող է դիմում տալ աշխատակցի ժառանգը:

18. Սույն կարգի 6.2 և 6.3 կետերով նախատեսված դրամական օգնության, 9.1, 9.2, 9.3 և 9.4 կետերով նախատեսված դրամական աջակցության հատկացման համար ռեկտորին զեկուցագիր է ներկայացնում տվյալ աշխատակիցը կամ նրա անմիջական ղեկավարը, իսկ եթե աշխատակիցը ռեկտորն է՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը:

19. Սույն կարգի 11.1 կետով նախատեսված դրամական օգնության, 12.1 և 12.2 կետերով նախատեսված դրամական աջակցության հատկացման համար, 14.1 կետով նախատեսված դրամական պարգևատրման, 15.1 և 15.2 կետերով նախատեսված

դրամական խրախուսման համար ռեկտորին զեկուցագիր է ներկայացնում այն դեկանը, որի ղեկավարած ֆակուլտետում ուսանողն ուսանում է, կամ ռեկտորին կարող է դիմել ՎՊՀ ուսանողական խորհուրդը:

20. Սույն կարգով Համալսարանի աշխատակիցների համար նախատեսված դրամական օգնությունների և աջակցությունների հատկացման համար ռեկտորին կարող է դիմել նաև Համալսարանի արհեստակցական կազմակերպության նախագահը:

VI. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

21. Սույն կարգը հաստատվում և դրանում փոփոխություններ են կատարվում Համալսարանի Գիտական խորհրդի կողմից:

22. Սույն կարգը ուժի մեջ է մտնում Համալսարանի Գիտական խորհրդի կողմից հաստատվելուց հետո:

1. Սույն կարգի 6.3 կետով սահմանված դժբախտ պատահարը հանկարծակի, չկանխատեսված իրադարձություն է, որը տարբերակվում է ըստ առաջացման բնույթի, վայրի և ժամանակի և որը հանգեցրել է անձի մարմնական վնասվածքի (այդ թվում՝ այրվածքի, ցրտահարության) և/կամ սուր թունավորման, ինչպես նաև մարմնական վնասվածքի և/կամ սուր թունավորման հետևանքով աշխատունակության ժամանակավոր կամ մշտական կորստի կամ մահվան:

2. Դրամական օգնություն ստանալու իրավունք ունեն Համալսարանի այն աշխատողները, ովքեր ստացել են հիվանդանոցային պայմաններում սուր, անհետաձգելի և պլանային ստորև նշված բուժօգնությունը, անցել են հիվանդանոցային և արտահիվանդանոցային ձևով իրականացվող այն ախտորոշիչ լաբորատոր և գործիքային հետազոտությունները, որոնց հաջորդում է տվյալ հիվանդության հիվանդանոցային բուժումը (այդ թվում՝ հիվանդանոցային և արտահիվանդանոցային ձևով իրականացվող այն ախտորոշիչ լաբորատոր և գործիքային հետազոտությունները, առանց որոնց իրականացման հնարավոր չէր մատուցել տվյալ հիվանդության հիվանդանոցային բուժումը),

Հիվանդանոցային բուժօգնությունը ներառում է՝

1) թերապևտիկ բուժում պահանջող հիվանդությունները.

2) վիրաբուժական բուժում պահանջող հիվանդությունները, այդ թվում՝

ա. նյարդավիրաբուժական, այդ թվում՝ գլխուղեղի անոթային հիվանդությունների էնդովասկուլյար բուժում (ներառյալ միկրոկաթետերի, միկրոպարույրի կամ օնիքսի արժեքը),

բ. սրտի վիրահատական և ներանոթային միջամտությունների իրականացում (ընդ որում, կորոնար անոթների ստենտավորման փոխհատուցումը ներառում է ինչպես դեղապատ, այնպես էլ ոչ դեղապատ ստենտի արժեքը), այդ թվում՝ սրտի փականների պրոթեզավորում, սրտի ռիթմը վարող սարքերի իմպլանտացիա.

3) վնասվածքների (կոտրվածքներ, հոդախախտեր, վերքեր, սալջարդեր, պոլիտրավմաներ) վիրահատական և ոչ վիրահատական բուժումը.

4) էլեկտրահարությունների, այրվածքների և ցրտահարությունների վիրահատական և ոչ վիրահատական բուժումը

Սուր, անհետաձգելի և պլանային դեպքերում ախտորոշման և բուժման ընթացքի վերահսկման նպատակով հիվանդանոցային բուժման համար իրականացվող լաբորատոր և գործիքային հետևյալ հետազոտությունների դեպքում՝

1) լաբորատոր՝

ա. կլինիկական,

- բ. բիոքիմիական,
- գ. իմունաբանական,
- դ. մանրէաբանական,
- ե. հորմոնալ,
- զ. գենետիկական,
- է. պաթոհիստոլոգիական,
- ը. PCR,
- թ. այլ լաբորատոր հետազոտություններ.

2) գործիքային`

- ա. ռենտգենաբանական (ներառյալ կոնտրաստային նյութի արժեքը),
- բ. համակարգչային տոմոգրաֆիա (ներառյալ կոնտրաստային նյութի արժեքը),
- գ. մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա (ներառյալ կոնտրաստային նյութի արժեքը),
- դ. անգիոգրաֆիա, այդ թվում` կորոնարոգրաֆիա,
- ե. ուլտրաձայնային հետազոտություններ,
- զ. ռադիոիզոտոպային հետազոտություններ,
- է. ֆունկցիոնալ հետազոտում (ԷՄԳ, էլեկտրամիոգրաֆիա, սպիրոգրաֆիա, դոպլեր, դուպլեքս հետազոտություններ և այլն),
- ը. էնդոսկոպիկ հետազոտություններ (էզոֆագոգաստրոդուոդենոսկոպիա, կոլոնոսկոպիա, ցիստոսկոպիա, բրոնխոսկոպիա և այլն),
- թ. նեյրոֆիզիոլոգիական հետազոտություններ (ԷԷԳ, ԷխոԷԳ, աուդիոմետրիա և այլն),
- ժ. դիագնոստիկ լապարատոմիա:

Փոխհատուցման ենթակա չեն`

1) արտահիվանդանոցային ձևով իրականացվող հետազոտությունները և բուժումը (ներառյալ դեղորայքայինը)` բացառությամբ դժբախտ պատահարի հետևանքով առաջացած վնասվածքների (կտորվածքներ, հոդախախտեր, վերքեր, սալջարդեր) ամբուլատոր հետազոտությունները և ամբուլատոր պայմաններում առաջնային բուժումը.

2) առանց բժշկական ցուցումների իրականացվող բժշկական ծառայությունները, դեղորայքը, հոսպիտալացումը.

3) հետևյալ հիվանդությունները և իրավիճակները`

- ա. տուբերկուլյոզ,
- բ. հոգեկան հիվանդությունները, դրանց հետևանքները և սահմանային վիճակները (ներոզ, փսիխոթերապիա, փսիխոզ և այլն), հոգեթերապևտի ծառայություններ, հիպնոս,
- գ. առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ,

դ. նախագորակոչային և գորակոչային տարիքի անձանց հիվանդանոցային փորձաքննություն,

ե. ուռուցքաբանական հիվանդությունների քիմիաթերապևտիկ բուժում,

զ. վերականգնողական բուժօգնություն,

է. երիկամային խրոնիկ անբավարարության կապակցությամբ կատարվող հեմոդիալիզ,

ը. մանկաբարձական բուժօգնություն.

4) ցանկացած կանխարգելիչ և կազդուրիչ միջոցառումներ, այդ թվում՝ իմունականխարգելիչ պատվաստումներ.

5) բնածին անոմալիաները և զարգացման արատները կամ անատոմիական առանձնահատկությունները, ժառանգական և գենետիկ հիվանդությունները՝ պարբերական հիվանդությունը, էպիլեպսիան, դեֆորմացիաները և քրոմոսոմային խանգարումները, մանկական ուղեղային պարալիչը.

6) քրոնիկ հիվանդությունները, որոնք պահանջում են մշտական, պահպանողական բուժում և դինամիկ հսկողություն (բացառությամբ ապահովագրության ժամկետի ընթացքում դրանց անհետաձգելի (կյանքին սպառնացող) սրացումների և բարդությունների).

7) շաքարային դիաբետ և նրա մշտական, պահպանողական բուժում պահանջող բարդությունները.

8) թոքերի քրոնիկ ոչ յուրահաստուկ հիվանդությունները՝ թոքերի էմֆիզեմա, պնևմոսկլերոզ.

9) ողնաշարի միջողնային սկավառակների ախտահարումները, դեգեներատիվ դիստրոֆիկ փոփոխությունները, օստեոխոնդրոզը.

10) աուտոիմուն և շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդությունները.

11) լյարդային անբավարարությունը.

12) քրոնիկական վիրուսակրությունը (այդ թվում՝ հեպատիտ B, C, D, E, F), բացիլակրությունը, պարազիտակրությունը.

13) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը.

14) ճառագայթային հիվանդությունները.

15) քաշի և խոսքի շտկումը, սեռի վիրաբուժական փոփոխումը.

16) կոսմետիկ, էսթետիկ կամ աշխատողի հոգեբանական վիճակը բարելավելու նպատակներով իրականացվող վիրահատությունները՝ բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով առաջացածները.

17) մաշկի հիվանդության կապակցությամբ (կոշտուկներ, պտկիկներ, գորտնուկներ և խալեր, կանդիլոմաներ) և դրանց բարդացումների հետ կապված՝ իրականացվող պլաստիկ և վերականգնողական վիրահատությունները.

18) քթի միջնապատի դեֆորմացիաների և դրանց բարդությունների շտկումը, դրանց բարդացումները՝ բացառությամբ պայմանագրի գործողության ընթացքում դժբախտ պատահարի հետևանքով առաջացածները.

19) աչքի էքսիմեր լազերային վիրահատությունները.

20) ատամնաբուժությունը.

21) ոչ ավանդական, այլընտրանքային (ոչ գիտական) բուժման ու ախտորոշման մեթոդները, փորձարարական կամ հետազոտական մեթոդներով բուժումը, կազդուրման ավանդական համակարգերը, հեռաբժշկության հետ կապված ծառայությունները.

22) սանատոր-առողջարանային բուժումը.

23) վերականգնողական (ռեաբիլիտացիոն) բուժումը, ֆիզիոթերապևտիկ միջոցառումները և բուժումը.

24) ներարգանդային սերմնավորումը և էքստրակորպորալ բեղմնավորումը.

25) ռեպրոդուկտիվ (վերարտադրողական) ֆունկցիայի և էրեկտիլ դիսֆունկցիայի (իմպոտենցիա) հետ կապված հետազոտությունները և բուժումը, հակաբեղմնավորիչ կոնսերվատիվ միջամտությունները, այդ թվում՝ ՆԱՊ-ի տեղադրումը և հեռացումը, դիսմենորեան, հակաբեղմնավորիչ միջոցները.

26) վերջույթների և դրանց առանձին սեզմենտների պրոթեզավորումը, էնդոպրոթեզավորումը՝ բացառությամբ տեղի ունեցած դժբախտ պատահարի արդյունքի.

27) պրոթեզները, էնդոպրոթեզները, բժշկական սարքավորումները, իմպլանտները, տեսողական և լսողական սարքերը, ինչպես նաև այլ կարգավորիչ բժշկական հարմարանքներ, հաշմանդամային սայլակները, օրթոպեդիկ սարքերը, կենսասակտիվ հավելումները, կանխարգելիչ վիտամինաթերապիան, կոսմետիկ պարագաները: Սույն կետում նշված բացառությունները չեն վերաբերում՝

ա. սրտի վիրահատական միջամտություններին, այդ թվում՝ սրտի փականների պրոթեզներին, սրտի ռիթմը վարող սարքերի իմպլանտներին և այլն,

բ. ներանոթային միջամտություններին, այդ թվում՝ գլխուղեղի անոթային հիվանդությունների էնդովասկուլյար բուժման ժամանակ օգտագործվող միկրոկաթետերներ, միկրոպարույրներ, օնիքս և այլն.

28) աշխատողի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը.

29) ակոհոլիզմը, թմրամոլությունը, թունամոլությունը և դրանց հետևանքով առաջացած հիվանդությունները.

30) աշխատողի կողմից հակաօրինական գործողությունների արդյունքում առաջացած վնասվածքները և հիվանդությունները:

1. Համալսարանի աշխատակցի մահվան դեպքում դրամական աջակցություն ստանալու նպատակով մահացած աշխատակցի ժառանգ(ներ)ը Համալսարանի Ընդհանուր Բաժին են ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

ա. դիմում՝ ռեկտորին

բ. մահացած աշխատակցի հետ արենակցական կամ ընտանեկան կապը հավաստող փաստաթուղթ (անձը հաստատող փաստաթուղթ, ծննդյան, ամուսնության վկայական,

գ. մահացած աշխատողի մահվան վկայական կամ բժշկատղիալական փորձաքննություն իրականացնող իրավասու մարմնի տված տեղեկանքն ու ստացած վնասվածքի կամ խեղման կամ ձեռք բերած հիվանդության պատճառական կապի մասին համապատասխան պետական մարմնի փորձաքննական ակտը

3. Համալսարանի աշխատակցի ընտանիքի անդամի մահվան դեպքում՝

ա. դիմում՝ ռեկտորին

բ. աշխատակցի հետ մահացողի արենակցական կամ ընտանեկան կապը հավաստող փաստաթուղթ (անձը հաստատող փաստաթուղթ, ծննդյան, ամուսնության վկայական և այլն)

գ. ընտանիքի մահացած անդամի մահվան վկայականը

3. Դժբախտ պատահարի կամ երկարատև բուժում կամ թանկարժեք դեղորայք գնելու նպատակով դրամական օգնություն ստանալու համար աշխատակիցը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

ա. դիմում՝ ռեկտորին

բ. դժբախտ պատահարի կամ երկարատև բուժում անցնելու կամ թանկարժեք դեղորայք գնելու փաստը հիմնավորող փաստաթուղթ (քաղվածք՝ հիվանդի բժշկական քարտից, էպիկրիզ)